

Քեզ յաւիտենական սիրով
սիրեցի : երեմ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, այնպէս ալ ես
ձեզ պիտի մխիթարեմ : Ես. 42 13
Քու խօսքդ իմ ոտքերուս
ճրագ է : Սաղ. 32 10

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԻՈՐ ԱՄՍԼԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ճշմարտութիւնը պիտի գիտ-
նաք, ու ան ճշմարտութիւնը
ձեզ պիտի ազատէ : Յովհ. Բ. 32
Ուրեմն քրիստոսի կողմանէ
դեսպանութիւն կ'ընենք, . . .
կ'աղաչենք ձեզի քրիստոսի
կողմանէ, հաշտուեցէք Աս-
տուծոյ հետ : Բ. Կորնթ. Ե. 20

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժանորդագիրն տարկ.— Ֆրանսա եւ Սուրիա 4, Պալքանեան երկիրներ 5 ֆր. ուրիշ երկիրներ 1,50 շիլ.

Rédacteur H. N. Ghazarossian, 12, Rue des Dominicaines — Marseille (France)

ԹԻԻ 6

Ա. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1923

ՍԱՏՈՒ ՃԱՆ ՆԷԼՍԸՆԻ ՊԱՏԳԱՄԸ

Ծանօթ. Խմբք.— Ընթերցողներէն մեծագոյն մասին
ծանօթ է նաեւ. Հնդիկ Սատու. Ճան Նէլսըն, որ Միջագետք.
Պաղեստին եւ Սուրիա պատելէ եւ. Հայերու մասնաւո-
րապէս խօսելէ յետոյ, այս վերջին երկու շարանն ալ
Լիօնի եւ շրջակայ քաղաքներու ու Մարսէյլի մէջ անցուց :
Իր միջոցաւ օրհնողներ շատ եղան : Ամէն անոնց համար,
որ զինքը լսելու պատեհութիւնը բռնեցան, հետեւեալ նա-
մակը խնդրեցինք, զոր Թարգմանաբար կը հրատարակենք
մեր սիրելի ընթերցողներուն համար, խնդրելով Աստուծոյ
որ անոնք եւս այդ պարզ աստուածային պատգամէն մխի-
թարուին :

Ճան Նէլսըն, Աստուծոյ ծառայ եւ իր սքան-
չելի շնորհքին համաձայն Անոր գաղտնիքներուն
պաշտօնեայ ԸԼԼԱԼԸ Կանչուած, կը բարեւէ բոլոր
ցրուած Հայ եղբայրները ի Ֆրանսա եւ ամէնուրեք.
Աստուծոյ մեր հօրը շնորհքը եւ իր չարչարանաց
մէջ անմահ համբերութիւնն ցոյց տուող յարուց-
եալ ու կենդանի քրիստոսի խաղաղութիւնը Ձեզի
հետ ԸԼԼԱԼ եւ զՁեզ պահէ անկումէ. Ամէն :

Ձէ՛ք գիտեր եղբայրներ, ի՛նչպէս Աստուած
առաջնորդեց իր ընտրեալ ազգը՝ իսրայէլը դէպի
գերութիւն եւ ի՛նչպէս երկա՛ր ժամանակէ վերջը
զանոնք իր հաւատարիմ ծառային՝ Կովսէսի մի-
ջոցաւ նշաններով ու հրաշքներով հանեց անկէ
որ ազատօրէն իրեն ծառայեն եւ անկեղծօրէն զԱՅՆ
պաշտեն, եւ թէ ի՛նչպէս զանոնք իրենց ապստամ-
բութեան պատճառաւ անապատին մէջ պատժեց,
ուր շատ մը առաջնորդներ կորսուեցան, թէ ուրիշ
անգամ մը երկիրը ի՛նչպէս կ'ըլլէր քանի հատները,
թէ Տէրը յառաջացող ժամանակներու մէջ ի՛նչպէս
Թշնամեաց ու գերութեան մատնեց զանոնք, բայց
դարձեալ ամէն պարագայի տակ ցոյց տուաւ ա-
նոնց իր ողորմութիւնն ու զօրաւոր ձեռքը, տալով
անոնց մարգարէներ եւ առաջնորդներ ի մխիթա-

րութիւն, որպէսզի Աստուծոյ դառնան : Նա իր
զաւակներուն չինայեց եւ սակայն երբոր անոնք
իրենց նեղութեան լուծին տակ աղաղակեցին, պա-
տասխանեց անոնց :

Ի՛նչ եւ ի կ ա յ չարչարանքները մոռնալով,
Թօթափելով մեր երկիւղը, փաթեռնինք մեր հո-
գիններուն Տէրոջը, որ շուտով պիտի ազատէ զՁեզ
աշխարհի բոլոր փորձութիւններէն : Կտաբերեցէք
Սուրբերը, որոնց չարչարանքները ոչ միայն մարմ-
նական, այլ յարատեւ հոգեկան եւ անվերջ հա-
ռաչանքներ էին ընդդէմ՝ հաւածական սուր նե-
տերու, եւ սակայն անոնք հաստատ կը մնային ու
իր շնորհքովը ուրախ էին : Խորհեցէք վայրկեան
մը թէ ի՛նչպէս կրնանք այդ կատարելութեան
հասնիլ եւ կեանքի Թագը վաստկիլ, եթէ զըր-
կանքներէն խուսափինք : Դիտեցէ՛ք զպոկի Թըր-
չունը, որ իրեն ապահով բնակարան մը շի-
նելու համար ծառին մէջ խուռոջ մը կը բանայ՝
օրերով ջանալով ու չարչարուելով, բայց երբ որ
իր տունը լմնցած է, այն ատեն ամէն ինչ մոռ-
ցած կ'ըլլայ եւ այդ բոյնին մէջ ապահովութեամբ
կը բնակի : Չարչարանքներու եւ զրկումներու մի-
ջոցաւ կրնանք մեր յաւիտենական բնակարան-
ները ժառանգել : Ամէն անոնք որ խորունկ հան-
քերէն ոսկի կը հանեն, շատ նեղութիւններէ անց-
նելու են, նոյնիսկ անակնկալ մահուանէ. նոյնպէս
անոնք որ չուրին խորքը մարգարիտներ կը փըն-
տեն, շատ նեղութիւններ կը քաշեն, բայց քրիս-
տոնէական բոլոր չարչարանքները յաւիտե-
ն ա կ ան բաներու համար են :

Իբր Արեւելքի Ձեզի հանդէպ մասնաւոր հա-
մակրանք ունիմ եւ կ'աղօթեմ որ Աստուած, որու
համար ամէն բան կարելի է, հաստատէ զՁեզ
յետ այսու իբր հոգեւոր ազգ մը՝ իր շնորհացը Թա-

գաւորութեան մէջ, ուր այն բաները զորս ազգովին զանց ըրած էիք, կատարէք իբր անհատներ քեր գտնուած տեղերուն մէջ: Վարդը ո՛չ միայն փուշ ունի, այլ անուշահոտութիւն եւ գեղեցկութիւն. ա՛րդ դուք ալ փորձեցէք քեր կեանքին մէջ լուստեաներ ըլլալ, վասնզի քեր դժբաղդութիւններուն վրայ նայելով, աւելի պիտի ընկճուիք:

«Դուք էք երկրի աղը», ըսաւ մեր վարդապետը: Այսօր ամէն երկրի եւ ազգերու մէջ ցրուած էք դուք եւ ուստի խորհելու էք թէ շատ մեծ կոչում մը ունիք կատարելու:

Դուք էք երկրի աղը: Մինչեւ որ աղը կերակուրի հետ չխառնուի, իր արժէքը չկրնար գիտցուիլ. բայց խառնուելով համ կուտայ: Ձեր հաստատակամութեամբ, Ձեր կրօնքի հանդէպ ունեցած արեւելեան նախանձախնդրութեամբ, Ձեր անկեղծութեամբ, Ձեր ջերմ բարեպաշտութեամբ, աշխարհի նորածնութեանց հանդէպ Ձեր պաղարիւնութեամբ, մարմնի ցանկութիւններէն եւ ոգելից ըմպելիներէն խորշելով, եւ միայն յարատեւ հետեւելով Շնորհաց Տէրոջը, աղ պիտի ըլլաք Ձեր շուրջը գտնուող ազգերուն ու անհատներուն, եւ որոնց մէջ ձեր պանդխտութեան օրերը դողով անցնելու էք: Մտաբերեցէք թէ հովէն քըշուած կայծերը կրակ կը ձգեն իրենց ինկած տեղերը: Եթէ հալածանք կամ սուր կամ ժամանակաւոր մարդկային զօրութիւն մը զմեզ ամէն կողմ ցրուած է, ի՞նչ պիտի կրնայիք ըսել եթէ այս կերպով ազգերու եւ անհատներու փրկութեան պատահաւ պիտի ըլլայիք: Ուստի այս վիճակը իբր աւանանշանք մը սեպելով Ձեզի, ջանացէք գործածել այս պատեհութիւնը ուրիշներու վկայութիւն ըլլալու համար: Բայց եթէ Ձեր հաւատքին մէջ տկարանաք, ճշմարտութեան հանդէպ կուրանաք, Աստուծոյ խօսքին հանդէպ անհնազանդիք, այն ատեն տրտմութիւն տրտմութեան վրայ պիտի աւելցնէք Ձեր վրան, եւ մահ՝ մահուան վըրայ: Ի՞նչ, Աստուծոյ դէմ ապստամբի՞նք. իր անձը մահուան հնազանդեցնողը ոյժ չունի՞ միթէ, ահա մեր սրտերը պաշտպանուած են Անով:

Հոս չարչարուելէ յետոյ՝ հոն իր յաւիտենական Թագաւորութեան մէջ ալ չարչարուինք միթէ՞ քրիստոսը Թողելով, զայն ուրանալով: Ո՛հ, կ'տէնամ ըսելու թէ անգամ մը ես ալ Աթէիսթ (անաստուած) եղայ, սակայն փառք Անոր՝ միայն քանի մը ժամ տեւեց այս վիճակը: Ան որ զիս մօրս որովայնէն կանչեց իրեն ծառայելու, զիս կրակէ հնոցին մէջ փորձեց: Ես զինքը օրերով կանչեցի, սակայն առանց պատասխանի: Այսպէս փորձութեան դառնութեանց մէջ, պատանի մը ըլլալով՝ կենդանի Աստուծոյ դէմ ապստամբեցայ: «Ամէն ինչ պարապ է, ըսի, Աստուած չկայ, քրիստոս չկայ, երթամ եւ անաստուածութիւն քարոզեմ»: Այսպէս նոյն իրիկունը իմ սովորութեանս

համաձայն եկեղեցիի խորանին առջեւ չճնարադրեցի աղօթելու համար: «Որո՞ւ պիտի աղօթեմ», ըսի: Բայց ահա Յիշդ այդ գիշերը Աբարիչը ինձ հետ խօսեցաւ. «Ի՞նչ կրնաս ընել ո՛վ մարդ, կենդանի Աստուծոյ դէմ մարտնչելով, սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքն իյնալ, վասնզի քու Աստուածդ մաշող կրակ է»: Այս ետ դարձուց զիս: Ուստի, եղբայրներ, ուժով բռնեցէք զինքը ու Ան ձեզ պիտի հաստատէ:

Ապա, նկատեցէք թէ ուրիշ պատեհութիւն մըն ալ ունիք, եւ այս միացեալ աստուածապաշտութիւնն է, մէկ մտքով եւ մէկ սրտով: Իբր պանդուխտ եւ օտարականներ մի՛ պառակտիք իրարու դէմ, եթէ ոչ Ձեր ազգին վրայ ամօթի մուր կը բերէք: Միթէ մենք բոլորս ալ Աստուծոյ ընտանիքին չե՞նք վերաբերիր. ուստի ի՞նչպէս մէկը կրնայ լուսաւորչական ըլլալ, ուրիշ մը բողոքական, ուրիշ մը կաթոլիկ եւ մէկն ալ շաքարածափ: Ուստի միացէք, պաշտեցէք զայն ներդաշնակութեամբ եւ անկեղծութեամբ ու ճշմարիտ սրտով: Եթէ մէկը Աստուծոյ լոյսն ընդունեց, անմիջապէս քարոզիչ ու վարդապետ Թող չըլլայ, Թող նա քրիստոսը լուին ու լըջօրէն ուսումնասիրէ, Թող սպասէ մինչեւ որ Աստուծոյ հոգին ընդունի, վասնզի Աստուած ամէնքը քրիստոսի քարոզիչներ չկանչեց, այլ քրիստոսը ապրողներ: Ամէն բանի մէջ ու ամէն կերպով քրիստոսը Թող փառաւորուի:

Վերջապէս եղբայրներ, արթուն կեցէք ու աղօթեցէք: Եթէ դուք օտարականներ էք, սատանան աւելի ազատութեամբ կը մօտենայ ձեզի: Մերժեցէք օտար վարդապետութիւնները, որոնք զձեզ սրխալ կ'առաջնորդեն: Իրաւ որ բոլոր վարդապետութիւնները միեւնոյն աղբիւրէն կը բղխին, այսինքն Աստուծոյ խօսքէն, սակայն անոնք ոմանց շինութեան եւ ուրիշներու աւերումին համար են, վասնզի սատանան ինքնին սուրբ-գրագէտ բրօֆէսէօր մըն է:

Պահեցէ՛ք ինչ որ սկիզբէն ընդունեցիք, այն ատեն ճշմարտութեան Աստուածը զձեզ ամէն ճշմարտութեան մէջ պիտի հաստատէ:

Մեր Հօր Աստուծոյ խաղաղութիւնը, ամենակարող փրկչին շնորհքը ձեր սրտերուն հետ ըլլայ: Ամէն:

30 Թգոստ. 1925

Անճանօթներու պէս՝ եւ ծանօթներ, մեռնողներու պէս՝ եւ ահա՛ կենդանի ենք. պատժուածներու պէս՝ ու չսպաննուածներ տրտմածներու պէս՝ ու միշտ ուրախ ենք. աղքատներու պէս՝ ու շատերը կը հարստացնենք. բան մը չունեցողներու պէս՝ ու ամէն բան ստացած ենք: Բ. Կոր. 2. 9-10:

ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿՆ

(Շարունակութիւն 36րդ էջէն)

Թ.

Քօթկարի մէջ Սունտար անակնկալ բարեկամի մը եւ ուղեկիցի մը հանդիպեցաւ յանձին հարուստ ամերիկացի Մր. Սթօքսի, որ իր հարստութիւնը միսիսնարական գործի յատկացնելէ յետոյ անձամբ կը ծառայէր Սատուի հանդերձին տակ :



ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿՆ ի Լօզան (1922)

Բարձրաստիճան հնդիկն եւ բարեկիրթ ամերիկացին, իբր Բրիստոսի զոյգ աշակերտներ, միասին գիւղէ գիւղ շրջեցան : Անոնք երջանիկ կ'զգային

ինքզինքնին, երբ որ վայրի անտառներէ հեռու տան մը ճեմելիքին վրայ գիշերելով՝ առտուն չոր հացի կտոր մը կ'ընդունէին բարեբար ձեռքէ մը :

Սակայն այսպիսի անօրինակ պայքարի մը առաջ փափկասուն Սունտարի պատանի ոյժերը բաւական չէին : Երբ որ անոնք վատառողջ գիւղ մը գիշերելով դուրս կուգային, պատանի հնդիկին վրայ ջերմի նշաններ երեւցան, որոնց ներքին ցաւեր ալ կ'ընկերանային : Պատանին քալեց որքան որ կրնար. եւ վերջապէս հեղ մըն ալ ճամբուն ճիշդ մէջտեղը գետին փռուեցաւ անկենդան : Սթօքս իր հիւանդ բարեկամը կոնակն առած քալեց մի քանի քիլոմէթր, մինչեւ որ հասաւ Եւրոպացիի մը ապարանք : Աս հոգեւորապէս շատ անտարբեր մէկն էր : Սունտար հոն լաւ խնամք վայելեց. Սթօքս պատմեց պատանիին դիւցազնական ուղիին վրայով, որմէ մարդը իսկապէս զգածեցաւ եւ յանդիմանուեցաւ իր Եւրոպացի մը ըլլալով Բրիստոսի հանդէպ այսքան անտարբեր ըլլալուն : Սունտար հոն բաւական ապաքինելէ յետոյ երկու աշակերտները դարձեալ ճամբայ ինկան :

Պօղոսի եւ Բառնարասի նման անխոնջ առաքեալները շրջեցան այդ ամբողջ գաւառը : Խաւար ու դժբաղդ տեղերու մէջ լոյս սփռելու համար ամենավտանգաւոր եւ յանդուգն քայլեր կը նետէին : Սապաթուի հիւանդանոցին բորոտներուն մէջ եւ Լահօրի ժանտախտի հիւանդներուն մէջ շարաթներով գործեցին : Հիւանդներու շարքերուն մէջ պառկելով անոնց հետ ընկերի նման կը վարուէին եւ իրենց կեանքովն ու խօսքերովը կը յայտնէին քրիստոնէական հաւատքին գաղտնիքները :

Հետեւեալ տարին, Մր. Սթօքս, որու առողջութիւնը բոլորովին քայքայուած էր, Ամերիկա վերադարձաւ հանգչելու եւ աւելի ոյժեր բերելու : Այսպէս պատանի Սատու առանձին մնաց :

Սատուի սրտին մէջ գաղտնի եւ սիրուն փափաք մը կը նիրհէր, որ ստէպ կ'արթննար եւ դինքը նոր որոշումի մը կը մղէր : Այս էր Պաղեստին երթալ եւ Բրիստոսի կոխած սուրբ տեղերը այցելել : (Այժմու երուսաղէմը կարծեմ՝ աւելի ակնածոտ ու յարգալիր խաչակիր մը չպիտի հիւրընկալէր քան այդ բարձրաստիճան հնդիկը) : Այս մտադրութեամբ նա դէպի հարաւ չուեց, մինչեւ որ հասաւ Քարաքի : Երուսաղէմ երթալու դժուարութիւններն ու արգելքները այնքան շատ էին որ նա այդ ծրագրէն հրաժարիլ ստիպուած էր եւ սակայն իր ճամբան շարունակելով վերջապէս Պոմպէյ հասնիլ թերեւս կարելի պիտի ըլլար. թէեւ նա այդ հարաւային երկրի ո'չ լեզուին տեղեակ էր ո'չ ալ ճամբաներուն : Ինքնայատուկ երկաթէ կամքով հարիւրաւոր քիլոմէթր երկայն ճամբաները կարելով եկաւ Նազիք որ Պոմպէյէն միայն 140 քիլոմէթր հեռու է : Անօթի ու ծարաւ, արիւնստած ոտքերով նա տեղւոյն մէջ գտնուած միսիսնարական կայանը

մտաւ : Դո՞ւնապա՛ն ծառան խնդրեց սպասել մինչեւ որ նա միսիոնարին լուր տար : Կարճ խօսակցութենէ մը յետոյ, որու մէջ պատահին կը յայտնէ միսիոնարին քրիստոնեայ Սատու մը ըլլալը, միսիոնարը գլուխը թօթուելով կարծեցեալ թափառաշրջիկ մուրացիկ ֆաքիրը քննելու յոգնութիւնն իսկ աւելորդ կը սեպէ — թէ արդեօք իրաւ քրիստոնեայ մըն է թէ նպաստ խնդրող մուրացիկ մը — եւ զայն կը մերժէ : Սունտար աներես չէր, քաղաքավար բարեւ մը տալով ճամբան շարունակեց, գրեթէ մօտ նուաղելու եւ սակայն առանց նեղանալու : Հագիւ թէ քանի մը հարիւր քայլ առած էր, միսիոնարին ծառան ետեւէն վազելով կանգ առնել խնդրեց, եւ բերելով հետը ծրար մը հարցուց թէ իրեն կը վերաբերէր, ճիշդ այդ օր սուրհանդակով իրենց հասցէովը եկած էր : Պատահին իր անունը կարդաց — անծանօթ գիր մը — սակայն իր անունն ըլլալուն համար առաւ եւ շարունակեց իր ճամբան եւ քանի մը հարիւր քայլ յետոյ գետեզերքը ծառի մը տակ ինկաւ : Չափազանց յոգնած էր, ոտքերը վիրաւոր, սաստիկ կը ցաւէին, գրեթէ անկարող էր խորհելու : Միսիոնարին սակաւ ասպընչական վերաբերումը հոգեկան տազնապ մըն ալ կ'աւելցնէր իր մարմնոյ յոգնածութեան վրայ : Սունտարի աչքերը քիչ յետոյ փակուեցան : Ժամանակ մը յետոյ երբոր արթնցաւ, տեսաւ իր առջեւի ծրարը, զոր նա տակաւին բացած չէր : Կէս հետաքրքիր այդ անծանօթ ձեռքով խնամքով կապուած ծրարին կապերը քակեց, բացաւ թուղթերը եւ գտաւ իր առջեւը մի քանի տեսակ չոր ուտելիքներ եւ վերջապէս ամենուն մէջ տեղը դարձեալ թուղթի մը մէջ փաթեթուած բան մը : Դրամ չըլլա՞յ այն : Այո՛, ոսկի մը, որով նա մի քիչ ժամանակ երկաթուղիով ճամբորդելով իր յոգնած ոտքերուն հանգիստ կրնար տալ : Խորապէս զգածուած այս շնորհալի քաղաքացիներէն, որ իսկապէս Աստուծոյ հայրական Սէրէն կը ճառագայթէր, Սունտար ծալլեց իր ձեռքերը եւ վառ շնորհակալութեան աղօթք մը արտասանեց :

Այս զարմանալի դէպքը Սունտարի կեանքին մէջ միայն մէկ անգամ չէ պատահած : Երբ որ օր մը ֆէնեօմի մէջ կը քարոզէր, դիմադրութեան եւ թշնամական արգելքներու հանդիպած, առանց ո եւ է բան մը ուտելու եւ խմելու ամայի անտառը ապաստանիլ ստիպուեցաւ : Յոգնած եւ պարտասած ծառի մը տակ քնացաւ : Կէս գիշերին մօտ մէկը զինքն արթնցուց, ուրիշ մ'ալ սափոր մը շուր եւ կերակուր բռնած էր իր ձեռքերուն մէջ : Մութին մէջ նշմարեց Սատուն որ ասոնք բնիկներ էին կամ գաղտնի քրիստոնեաներ, կամ թէ իր խօսքերէն ազդուած հեթանոսներ ըլլալու էին : Պատահին կէս քունի մէջ, կէս մ'ալ զարմացած, բնաւ չհարցուց անոնց ո՞վ ըլլալը :

Ճամբուն մէջ երբեմն անակնկալ դժուարու-

թիւններու եւ երբեմն ալ ուրախալի յաջողութիւններու կը հանդիպէր Սատու : Ամբողջ շաբաթ մը նա չուպուլիօրի պաղարին մէջ քարոզեց, աստանդ մարդիկ ազդուեցան եւ սկսան անհանգիստ ըլլալ : Օր մըն ալ երբ կը քարոզէր, մահմէտական մօլլա մը ճեղքեց ժողովուրդը եւ մօտենալով իրեն ապտակ մը իջեցուց իր երեսին, Սատու առանց դէմքի անհանդարտ շարժում մ'ընելու միւս երեսը դարձուց : Մահմետականին բարկութիւնը իջած էր այս անակնկալին առջեւ. սակայն գիշերը մօլլան չէր կրնար քնանալ : Կէս գիշերին ատենները տեղույն բնիկ քարոզիչին դուռը կը զարնուէր. եւ հոն Սունտարին ուր ըլլալը կը հարցըւէր. անիրաւը ներողութիւն խնդրելու եկած էր : Միւս առտու երբ Սունտար իր սովորութեան համաձայն դարձեալ պաղարը կ'իջնէր, քարոզիչը պատահած եղելութիւնը պատմեց իրեն եւ երկուքը մէկտեղ մօլլան այցելեցին, որ քաղաքավարութեամբ իրմէ ներողութիւն խնդրեց :

Ժ.

Միսիոնարական ճամբարներն մէջ. — Պատանի Սատուին համբաւը եւ քարոզութեանց յաջողութիւնը բոլոր միսիոնարական ընկերութեանց ու շաղրութիւնը գրաւեց : Պատանին այնպիսի հուժկու խօսելակերպ մը ունէր որ բնիկները անոր բերանէն կը կախուէին : Սունտար պէտք չէր այսպէս ամէն տեղ քարոզէր, այլ մասնաւոր դաշտ մը ունենալու էր գործելու համար, եւ անկէ առաջ հարկ էր հիմնական նախապատրաստութիւն մը այս գործին համար, ուստի կանչուեցաւ Լահօրի Ս. Յովհաննէս աստուածաբանական ճամբարնը ուսանելու : Իր քննութիւնը տալէ յետոյ առանց դժուարութեան Բ. կարգին հետ խառնուեցաւ : 1909 եւ 1910 տարիները այսպէս գիտական եւ աստուածաբանական ուսումով անցաւ, վազանցներու մէջ Սունտար քարոզչութեամբ կ'ընթացէր :

Քրիստոնեայ Սատու մը այն ժամանակ բոլորովին նոր բան մըն էր : Ոմանց մտքին հակառակ կուգար իր կերպը. ոմանք զինքը տեսած ատեններն գլուխին կը շարժէին, ուրիշներ ո՛չ համակրական դատողութիւններ կ'ընէին իրեն հանդէպ բայց ո՛չ մէկ քննադատութիւն զինքը ետ կը պահէր իր որոշումէն : Ուսումը դեռ չաւարտած Սունտար քարոզիչ կարգուեցաւ նոյն զաւառին մէջ : Բայց սա ալ երկար չտեւեց, վասն զի անտեսանելի ոյժ մը զինքը դէպի խաւարն թիպէթ կը քաշէր, ուստի դարձեալ Քօթկար վերադարձաւ դէպի Հիմալայայի ստորոտները : Ճան Ուէյսլի ըսած է. « Ամբողջ աշխարհ իմ թեմական ժողովուրդս է » : Ճիշդ նոյն սկզբունքով կ'ապրէր նաեւ Սունտար, վասն զի ուր որ պատենհութիւն մը գտնէր՝ հոն կը քարոզէր : Սակայն այսպիսի քարոզչական կերպ մը միսիոնարներու գործին չէր գար. եթէ

նա իբր քարոզիչ ձեռնադրուէր, պէտք էր այս գործակերպին վախճան տար, բայց միթէ Սոն-տար պիտի կրնա՞ր իր սկզբունքները ոտնակոխ ընել: Իսկ եթէ յամառէր իր այս կերպին վրայ, ճեմարանէն դուրս պիտի ղրկուէր: Պատանին խորունկ քննութենէ մը յետոյ հասկցաւ թէ ո՛չ մէկ միսիոնարական տնօրէնութեան կրնար տրա-մադրել ինքզինքը, հապա Տէրոշը կողմէ սատու-ութեան ուղին էր որ կ'առաջնորդուէր: Այսպէս Սատու շրջուն քարոզիչ մը եղաւ իր երկնային վարդապետին հնազանդելով. նոյն միսիոնարու-թեան եպիսկոպոսը Լէֆրօյ, որ Հնդկաստանի անկլիքան եկեղեցւոյ Արքեպիսկոպոսն է այժմ, եւ որ լայնսիրտ անձնաւորութիւն մըն էր, պա-տանին բացարձակ ազատութիւն տուաւ:

Որոշումը տրուած էր: Սատու անկախ էր. անկախ ամէնուն ծառայելու:

(Շարունակելի)

Յ. Ն. Ղ.

ՆԵՖՍԱՅԻՆ ԱԶԱՏ ՕԼՄԱԳ

Նէֆստէն ազատ օլմագ իշխւն իւշ ատըմ վար տըր.— ա) Խաչ, բ) Բուհ իւլ գուտս, գ) Բրիստոսըն գըյամընըն գուվլէթի:

Շիմտի անլէրի պիւրէր պիւրէր միւթալաա էտէլիմ: Ալլահըն բուհու պու հազիգաթըն կիդ-լի հէր պիւր պէրէքէթիւնի պիզէ պէյան էթմէյէ գատիր տիր:

Ա. Էվվէլա Խաչ:— Յիսուս Բրիստոս պիւթիւն տիւնեանըն կիւնահլարընա պէտէլ օլմագ իւզրէ խաչտա գուրպան օլմագա բազի օլտու, վէ եինէ օրատա իքինճի օլարագ խաչ-տա պիզի թէպրիւր վէթագտիս էյլէտի: Բօմ. Ը. 3-4 տէ՝ «Զիրա շէրիաթ թէն սէպէպիյլէ աճիգ օլտուղը հալտէ, իճրա էտէմէտիյինի Ալլահ քէնտի օլլընը կիւնահլը թէն միւշապէհէ-թինտէ վէ կիւնահտան տօլայը իրսալ էտիպ, կիւնահ ալէյհինէ թէնտէ հիւքմ էտէրէք իճրա էյլէտի: Թաքի շէրիաթըն ահքեամը պիզտէ, եանի թէնճէ տէյիլ, անճաք բուհճա եիւրիւ-յէնլէրտէ իթմամ օլտուա», «Կիւնահ իշխւն պէ-տէլ», կիւնահլը թէն միւշապէհէթինտէ խաչ-տա թէպրիւրիգի Ալլահ Բրիստոսա հէվալէ էյլէտի: Ալլահ պիզիւմ կիւնահլը ճէսէտիւրիգի Բրիստոստա խաչա մըխլայըպ էօլտիւրտիւ: Պէն անը պուշտան պաշգա պիւր եօլտա իզահ եա թարիֆ էտէմէմ, ամմա պիւրիւրիմ քի պէօյ-լէ տիր:

Պէլքի պիւրիսի՝ «Պէն քէնտի կիւնահքեար

նէֆսիմի խաչ իւզէրինտէ մըխլանմըշ կէօրմէ-յօրում» տէր: Պէն պուշը քէնտիմ իշխւն շէհա-տէթ էտէպիւրիւրիմ: Էվվէլ Ալլահ խաչտա պի-զիւմ նէֆսիմիգի մըխլատը: Խաչ, բէգալէթէ ալ-չագլըղա պիւր նիւմուէնէ տիր: Զիրա «Խաչ իւ-զէրինտէ հէր ասըլան մէլուէն տըր» տէյու մու-հարրէր տիր:

Իմտի Ալլահ պիզիւմ պու նափաք նէֆսի-միգի Բրիստոստա խաչլանմագա բազի օլտու իսէ պու Ալլահ իշխւն նէ գատար կիւն պիւր մատտէ իտի: Օ պիզիւմ իշխւն խաչտա էօլտիւ, իտամ էտիլտի օրատա եաշատը գալտը. ա՛հ, աճաիպ խաչ, Ֆագաթ եալընըգ պու գատար տէյիլ տիր, տահասը վար: Պու հազիգաթտա Բրիստոս վէ պէն պիւր իգ: Պէն անտէ էօլտիւմ, պէն Բրիստոստա պիւր մէնգիլէ եէթիշտիմ, ա-նըն խաչընա տիգ չէօքէրէք, օրատա պանա պիւր մէվգի թութտում: Բրիստոսըն էօլիւմիւն-տէ պիւրլէշէրէք, պէն քէնտի հէր շէյիմի, նէֆ-սիմի արգուլարըմը, հիւքմիւմի, շէրիւր արգու վէ հասըթլէրիմի, տիկէրլէրէ իշթիւրագ վէ մու-հապպէթսիլիյիմի վէ սաիւրէ, պուշլարըն ճիւմ-լէսինի պիւր միւնճրիմ կիպի տէտիմ:

Սէն դատտար վէ մէլուէն նէֆսիւմ, սէն էօլ-մէլիսին: Պէնիւմ Ալլահըմ սէնի խաչա մըխլատը: Սէն ազիւմ իրատէթիւմ, արգուլարըմ, հաթթա իմանըմ պիւրէ պիւրէր պիւրէր կէլիպ խաչտա մըխ-լանմալըսընըգ տէտիմ: «Զիրա Բրիստոսըն օ-լան քիմսէլէր թէնի, անըն հավէսլէրի վէ շէհ-վէթլէրի իլէ սալպ էթտիլէր» (Գալ. 3.24): Պու տազիգէտէն վէ գաթի գարարտան սօնրա պու հալ պէնտէ մէյտանա կէլտի, պէն պու նէֆ-սիմի խաչ իւզէրինտէ խաչլանմըշ կէօրտիւմ: Բրիստոսըն էօլիւմիւնտէ անըն իլէ պիւրլէշտիմ: Անըն էօլիւմիւ իքիմիգի պիւր էյլէտի:

Ֆագաթ սէն տէրսին. «Էֆէնտի պէն պու հալը պէօյլէ կէօրմէյօրում, պուշա նասըլ ինա-նապիլիւրիւմ, պէն պու հալը տաիմա եիւրէ-յիմտէ սափլանան պիւր իյնէ կիպի հիսս էթմէ-լիյիմ մի՞ քի պէնիւմ նէֆսիւմ եաշայօր մը՞, պէնտէ էօլմիւշ մի՞:

Ֆագաթ պէն անը քէնտիւմ պիւրիւրիւմ, սա-նա պաշգա պիւր եօլտա անկլատայըմ:

Բ. Բուհ իւլ գուտս:— «Զիրա էօլ-տիւնիւլգ վէ հալեաթընըգ Բրիստոս իլէ պէրա-պէր Ալլահտա մահֆուգ տըր» (Գօլ. 3.3): «Թէն բուհա գարըր արգու էտէր» (Գալ. 3.17): «Էզէլի բուհ վասիթասըյլէ գաթընը լէքէսիգ օլարագ Ալլահա թագտիւմ էթմիւշ օլան Բրիստոսըն գա-նը, գամիւրինիգի հայ օլան Ալլահա իպատէթ

էթմէնիզ իշխան, էօլիւ ամէլլէրտէն նէ՝ գատար զիյատէ փաքլէյէճէք տիր» (Իպր. 9.14): Լաքին սէն տէրսին քի պու մատտէյէ պէօյլէ ինանըր իսէմ, տաիմի սուրէթտէ եիւրէյիմտէ պիր եարա հիսս էտէճէյիմ, աճէպա նէֆսիմ էօլմիւշ մի՞ էօլմէմիշ մի՞ տէյու: Պու էօյլէ օլաճաք քի քէնտիմ ըէնճիտէ իշինտէ փարէ փարչա օլաճաղըմ: Պու պիզի իւշիւնճիւ նօգթայա գլաղուզլար:

Պէն պու ճէվապը վէրիրիմ: Պու անըն նիշանը տըր. Ալլահըն ըուհու սիզին նէֆսանի էօմրիւնիւզիւ էօլտիւրէճէք տիր: Անը, Ք Ր ի ստոսըն էօլիւ միւ վասըթասըյլէ էօլտիւրէճէք տիր: Օ Քրիստոս Յիսուսը սիզին տէրուինիզտէ եաշայան վէ տիրի պիր Ձաթ հալինտէ մէյտանա կէթիրէճէք տիր: Քրիստոս սէնին իշիւն ամէլի պիր պիլկի օլաճաք տըր: Սիզին ֆիքըրինիզի Քրիստոստա սապիթ գըլաճաք տըր: Տօթում սէն Րուհ իւլ գուտս հագգընտա տիւշիւնմէյօրսըն, նէֆս հագգընտա չօգ տիւշիւնիւյօրսըն, լաքին Րապպըն հագգընտա հիշ տիւշիւնմէյօրսըն:

Իմտի, էյ պիրատէր վէ հէմշիրէլէր: Պու եօլ Քիթապը Մուգատտէստէ էն գըսա վէ քէսէ պիր եօլ տըր, ամմա այնի զէմանտա ղայէթ տէրին պիր սըրըր տըր: Ֆազաթ եալընըզ պէն սիզէ շուըն սիւալ էթմէք իսթէրիմ քի, Րուհ իւլ գուտս, Քրիստոսը սիզին էօմրիւնիւզիւն մէրքէզի վէ մուհիթի էյլէմիշ մի՞ տիր: Գալպինիզին մէրքէզի հայեաթը Քրիստոս օլմուշ մը՞ տըր: Շիմտիլէ գատար սէնին էօմրիւնիւն մէրքէզ վէ մուհիթի նէֆս օլմուշ տըր. ա՛հ, նէֆսի գուրպան էթ. Բարապպա, Բարապպա, Բարապպա խաշա մըխլանմալը: Տիւնեա Քրիստոսըն տէյիլ, իլլա Բարապպանըն եաշամաւընը իսթէր: Բարապպա էօլմէլի, Քրիստոս եաշամալը:

Ալլահ պու հագիգաթը քէնտի իզգէթի իշիւն պիզէ պէյան էյլէսին տէյու տուա էտէլիմ:

էֆ. Պի. ՄԱՅԸՐ

The Alliance Weekly

Ղազէթասընտան Թէրճէմէ

ՆԱԶԱՐԷԹ Գ. ՏԱՐԱԳՃԵԱՆ

17 Յուլիս 1925

Գ. Խան — Սիւրիա

ԹԻՍՈՒՍՈՒՆ ՄՈՒՀԱՊՊԵԹ

- 1 Յիսուս Սէն սէվտին պէնի,
Սէվմէզ իքէն պէն Սէնի,
Նէ՝ աճիպ պիր մուհապպէթ,
Նէ՝ ազիմ պիր ինայէթ:

Chorus Կէօքտէն կէլտին Սէն պանա,
ձէզպ էթտին պէնի Սանա,
Միւշթազ օլտուս պէն Սանա,
Ա՛հ գալպիմ նասըլ գանա:

- 2 Նէտէն օլտու Սէն սէվտին,
Կիւնաիտայքէն պէն տէրին,
Արատըն պուլտուն պէնի.
Նասըլ սէվմէյիմ Սէնի:

Chorus

- 3 Եօրդուն իտիմ պէն ղայէթ,
Գալպինտէ պուլտուս ըաիսթ,
Հէմ տէրին պիր սէլամէթ
Վէ աճաիպ մէսէրրէթ:

Chorus

- 4 Իմտի վագֆ էթտիմ էօմրիմ,
Թագտիս էթ եա՝ Րապպ գալպիմ,
Սէվէյիմ սէնի ճանտան,
էտէյիմ իւրտմէթ գալպտէն:

Chorus

- 5 Օլմասըն շէրի տիւնեա,
ձէզպ էթտին պէնի ապա,
Հըթիզ էթ պէնի գալպինտէ,
Պու էօմրիւն Սէֆէրինտէ:

Chorus

- 6 Ղալիպ օլուպ Րապպըմլա,
Կէօքտիւքտէ Սէմավաթա,
Շու տիւնըմ էթտին համա,
Եանգօ վէրսին Սէմավաթա:

Chorus Կէօքտէն կէլտին Սէն պանա,
ձէզպ էթտին պէնի Սանա,
Միւշթազ օլտուս պէն Սանա,
Ա՛հ գալպիմ նասըլ գանա:

Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

(*) Մագաուր տաիսի վար տըր:

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբեր 13-19

ՅԱՐՈՒՑԵԱԼԸ ՈՒ ԻՐԵՆԵՐԸ

Կիր.- Յիսուսի հետ յարութիւն առած. Հոովմ. 2. 8-11:

Բշ.- Յարուցեալը եւ իրենները. Յովհ. Ի. 19-29:

Դշ.- Վերի բաները փնտռեցէք. Կող. Գ. 1-11:

Դշ.- Առանց յոյսի եւ տաքնապած. Սաղ. ԾԵ. 1-9:

Եշ.- Յիսուս կը յաղթէ մահուան երկիրը. Դուկ. ԻԲ. 39-46:

Ուր.- Յիսուս կը յաղթէ մահուան. Եբր. Բ. 11-18:

Շաբ.- Իրեններուն համար երկինքը կը բա-
նայ. Գործ. Է. 54-59:

Հարցում.- Յարուցեալը իրեններուն ի՞նչ
պարգեւներ բերած է:

Սեպտեմբեր 20-26

ՅԱՐՈՒՑԵԱԼԸ ՈՒ ԻՐԵՆԵՐԸ

Կիր.- Ոչինչ կրնայ զիս Բրիստոսէ զատել. Հոովմ. Ը. 31-39:

Բշ.- Նա իրեններուն կը յայտնուի. Յովհ. ԻԱ. 1-14:

Դշ.- Երբէք մինակ. Մատթ. ԻԸ. 16-20:

Դշ.- Առանց իրեն յուսահատ. Դուկ. ԻԴ. 13-24:

Եշ.- Իրմով՝ յուսալից. Դուկ. ԻԴ. 25-35:

Ուր.- Ոչխարաց հովիւը. Եբր. ԺԳ. 20-21. Սաղ. ԻԳ.:

Շաբ.- Քաջ եղէք մի՛ վախնաք. Յես. Ա. 1-9:

Հարցում.- Յիսուսի հետ մտերիմ յարաբերող
մըն ալ զբաղումի տէր մարդ կրնա՞յ ըլլալ:

Սեպտ. 27 — Հոկտ. 3

ՅԱՐՈՒՑԵԱԼԸ ՉՄԵՉ ԻՆՉԵՐ ԿՐՆԱՅ ԸՆԵԼ

Կիր.- Իր փառաց վկաներ. Բ. Պետր. Ա. 12-16:

Բշ.- Ինչ որ Յարուցեալը մեզ կրնայ ընել. Յովհ. ԻԱ. 13-25:

Դշ.- Աշխարհի յաղթող. Մարկ. ԺԶ. 14-18:

Դշ.- Անվախ քարոզիչ. Գործ. Բ. 14-21:

Եշ.- Հրաշագործ. Գործ. Թ. 32-43:

Ուր.- Ազատ մարդիկ. Գործ. ԺԲ. 1-10:

Շաբ.- Խոնարհ մարդիկ. Ա. Պետր. Ե. 5-7:

Հարցում.- Մեղքը զմեզ ի՞նչ ըրած է, Յիսուս
ինչ կ'ընէ: Յիսուս ինչո՞ւ կ'ուզէ զմեզ նորոգ-
ուած մարդիկ ընել:

Հոկտեմբեր 4-10

ՅԻՍՈՒՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Կիր.- Յաւիտեանական թագաւոր. Սաղ. ՃԺ 1-7:

Բշ.- Յարձակում առ Թշնամի երկիրը. Գործ. ԺԶ. 6-15:

Դշ.- Հակառակորդին ի զուր գիմադրութիւնը. Գործ. ԺԶ. 16-24:

Դշ.- Վճռական յաջողութիւն մը. Գործ. ԺԶ. 25-40:

Եշ.- Խաչեալը գործի վրայ. Փիլ. Ա. 3-11:

Ուր.- Պարտականութեան միշտ գիտակից. Փիլ. Բ. 12-18:

Շաբ.- Թագաւորին վերստին զալստեան միշտ
սպասող. Փիլ. Գ. 13-21:

Հարցում.- Ի՞նչ է քու դիրքդ Յիսուսի թագա-
ւորութեան մէջ. բոլորովին զո՞ւրսը, մէջը քնա-
ցած, թագաւորութեան համար ծառայո՞ղ:

ՆՐԵՄԻԱ ՆՐՈՒՍԱՂԵՄԻՆ ԽԱՐԱՊԱՆԱՐԸ ԻԻՋԵՐԻՆՏԵ

Կէճէ կիսնորդ կէօղ լե-
րիմ կէօղ եաշը տօքսմէք.
տէն ֆերաղան Էթմէյե-
ճէք տիր, զիրա գաղմբ
պաքիքէ գըղը պէօյիւք
պօղղունըգէ, շիտտեմլի
վուրուշլէ պօղղուրու: Էյեր
սահրայա չըգար խում,
իշմէ գըլքընլա գանձ օլու.
նանլար, Էյեր շեհրէ կիրեր
սում, իշմէ գըթըլգումն
խասմա օլանլար վար.
գիրա կերէք փեյղանլէր
վէ կերէք քեանին պիլ-
մետիքերի տիլարը տօլա.
շըրլար:

Նրեմ. 15. 17-18



Է՛յ նօլտան կեջնլերին
Ֆիւմլեաի, վաղիֆէ Էտին.
մէ՞զ միսինիզ. նազար Է.
տիլ պագընըզ, պանա ի.
սապեթ Էտէն տերտ կիպի
տերտ վար մը տըր. զիրա
Բապալ ղազապընըն շիտ-
տեմի կիսնիւտէ պենի
Թագեիզ Էյլետի:

Մերս. 1. 12

Եա Բապալ պիղէ վագը
օլանը Թեգեքքիւր Էյլէ նա.
զար գըլ վէ հագարեմի.
միղէ պագ: Եա Բապալ պի-
գի քեանտին տէօնտեր վէ
տեօնելիմ. կիսնլերիմիզի
Էվվէլքի կիպի Թեօտիտ
Էյլէ:

Մերս. 5. 1. 21

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Մեր խնդրանքին համաձայն, մեր սիրելի քարեկամը Տիար Զևնաս Ա. Եղոյեան, վեր. Ա. Զ. Եղոյեանի որդին, Գուպուէն ղրկած է մեզի հետեւեալ տեղեկագիրը, որ վստահ ենք թէ շատերէ հետաքրքրութեամբ պիտի կարդացուի :

Գ ու պ ա — Հ ա վ ա ն ա . — Երեք տարիէ ի վեր հոս եկող ու մնացող հայութեան թիւը այսօր կը հասնի մօտ 1500 ի: Ասոնց եմէ չըսենք ամէնը, գէթ խոշոր մեծամասնութիւնը տարիներէ ի վեր իրենց բաղձացած բայց չվայելած Ամերիկեան մտնելու դիւրութիւններ ակնկալելով, եւ հոն եղող իրենց ազգականներէն ալ այդպէս թելադրուելով՝ ամէն զոհողութեամբ գաղթած են Հավանա, ուր հասնելէ քիչ յետոյ մեծ յուսախարութեան ենթարկուած՝ կը մընան տակաւին: Այսպիսիներու թիւը օրէ օր ալ կ'աւելնայ:

Պէտք է ըսել որ Գուպայի հայ գաղթականութիւնը՝ բաղձաւորութեամբ ուրիշ տեղերու (ինչպէս Ֆրանսա, Սուրիա եւ այլն), ամէնէն խեղճը եղած է հոգեւոր եւ բարոյական տեսակէտով. ցաւ է ըսել որ հոս գրեթէ չկան այն բարոյական, կրթական կամ հոգեւոր հաստատութիւնները, որոնց մասին կը լսենք ուրիշ տեղերէ: Ու այս յուսահատական վիճակը պատճառ եղած է որ տեղւոյն հայ գաղթականութիւնը երկրին աննպաստ պարագաներուն (օր. անգործութեանը) տակ ճնշուած ըլլալով՝ ալ կարծես վերոյիշեալ բաներուն փափաքն ու պէտքը չզգար. ուրիշներու մէջ ալ այդ փափաքը պլլված պատրոյգի մը նման մարելու վրայ է, կարծես կտորած է բարոյական ուժը:

Տեղւոյն մէջ իւրաքանչիւր հայ գաղթականին մարմնը, միտքն ու հոգին չարքարող մղձաւանջը ապրումսի խնդիրն է. քիչ բացառութիւններ կան, որոնք բարոյական ուժերով հաստատուած, ամէն պարագայի տակ սորված են հնազանդիլ տէրունական պատուէրին, — «Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ Թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին»: Մատթ. Զ 33: «Վասնզի ո'չ միայն հացով կ'ապրի մարդ»: Մատթ. Դ. 4:

Այսու ամենայնիւ չենք կրնար անտեսել այն ջանքերը որոնք Թափուած են մինչեւ այսօր տեղւոյս հայ ժողովուրդին հոգեւոր եւ բարոյական կեանքի մշակման համար. այդ ջանքերը պզոտիկ արդիւնքներ մը յառաջ բերած են:

1924 սեպտեմբեր ամսուն դպրոց մը բացուեցաւ տեղւոյս Ամերիկացի բարերարներու կողմէ, հայ մանկւոյն ու պատանեաց կրթութեան համար, դասաւանդութեամբ Օր. Սարա Եղոյեանի եւ Օր. Մառի Աւագեանի, որոնք իրենց ճիգն ու ջանքը չխնայեցին ամբողջ տարին եւ բաւական յաջողութիւնով փակեցին դպրոցական տարին, սեպտեմբեր ամսուն դարձեալ վերսկսելու համար:

Իսկ գալով հոգեւոր գործերու, երեք տարիէ ի վեր հոգեւորապէս բոլորովին անտես թողուած եւ սովահար եղած էր Գուպայի հայ գաղթականութիւնը: Ո'չ քահանայ, ո'չ քարոզիչ եւ ոչ ալ հոգեւոր գործող մը կար: Այս վերջերս սակայն սկսուած է ջանքեր ըլլալ նաեւ այս կարեւոր խնդրոյ շուրջ:

Նոյն ամերիկացի բարերարները համակրելով հայ ժողովուրդին եւ ցաւելով անոնց հոգեւոր խեղճութեան վրայ, վերջերս մեզի տրամադրեցին իրենց մատուռը (Temple Baptiste), որ այժմ մեզի իբր աղօթատեղի կը ծառայէ: Հոս տեղի կ'ունենան ժողովներ եւ Աստուածաշունչի դասեր՝ հայերէն լեզուով եւ շարաթը երեք անգամ: Այս ժողովները զգալի տարբերութիւն մը ըրին ումանց լքեալ ու անյոյս վիճակին վրայ եւ կը յուսանք թէ շատերուն օգտակար պիտի ըլլան, փիլ. Ա. Յի համաձայն թէ՛ «Ան որ ձեր մէջ բարի գործ մը սկսաւ, մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ:

Յատկապէս պիտի խնդրէի ընթերցողներէն որ իրենց ջերմ աղօթքները չխնայեն, եւ խնդրանքներ մատուցանելով սիրելի երկնաւոր հօրը պատերազմակից ըլլան, Գուպայի հայ գաղթականութեան հոգեւոր բարգաւաճման գործին համար:

Հավանա, Օգոստ. 1925

ԶԵՆԱՆ Ա. ԵՂՈՅԵԱՆ

Մ ա Ր ս է Ղ . — Էջմիածնի Մայր Աթոռի Երոպայի Պատուիրակ Պալաքեան Եպիսկ. օգոստ. 14 ին քաղաքս ժամանելով՝ կարեւոր կարգադրութիւններ ըրաւ եկեղեցական եւ ազգային շրջանակներու մէջ, նաեւ պատարագեց քաղաքիս ու Քէմրին մատուռներուն մէջ եւ քարոզեց աւետարանական համայնքին: Բաց աստի, զանազան մարմիններու կողմէ հրաւիրուելով անոնց բանախօսեց, ամէն կերպով գոհ թողելով իր ունկնդիրները: Իր այցելութիւնը քաղաքիս գաղութին մէջ՝ իսկական խանդավառութիւն մը արթնցուց: Եպիսկոպոսը մեկնեցաւ ասկէ Սեպտ. 2 ին:

Հ ա յ ա ս տ ա ն . — Տօքթ. Նանսէնի տեղեկագրութեանց համաձայն իր ցուցուցած հոգերը մշակելի դարձնելու համար 9 միլիոն ռուպլիի պէտք կայ, զոր նա զանազան երկիրներէ իբր պարտք կամ նուէր առնելու յոյս ունի: Յունաստանի մէջ 1500 հոգի կը պատրաստուին Հայաստան գաղթելու համար:

Le Gérant : Pasteur Kaltenbach

Տպագր. Ա. ԵՂՈՅԵԱՆ
40, Բիւ տէ Տօմինիքէն. Մարտի 1925